

ՅՐ + 23.02.2017
Կայ՝ 11018095



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 145-8

« 16 » փետրվար 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 1197- Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասերով.

Հրամայում եմ՝

- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997 թվականի մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1197-Ն հրամանի հավելվածի՝
 - 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«Ամփոփիչ քննությունը կարող է անցկացվել առանձին մասնագիտական առարկաների համար՝ բանավոր կամ գրավոր:»,
 - 9-րդ կետում «հաստատության ղեկավարի առաջարկությամբ նշանակում է ՀՀ կրթության և գիտության նախարարը» բառերը փոխարինել «նշանակում է հաստատության ղեկավարը» բառերով:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:



Լևոն Մկրտչյան